դողալ: Ես եւ Ֆոյրերս փախչում էինք ու մըտնում մեր ֆնաշորերի մէջ...

... Ֆէրրաշները հօրս բռնում էին ու կապում մեր խրճիթի սեան վրայ, այնքան պինդ, որ շարժուիլ կարող չէր, կարծես ամբողջ մարմնով մեխած լինէր սեան հետ: Նրա մօտ դիզում էր մի ահագին խուրձ դալար ճիպոտների. սկսում էին ծեծել հօրս: Նա մորմոքում էր, աղաղակում էր... Բայց ո՞վ էր նրա ձայնը լսողը... Ֆէրրաշները հարկ էին պահանջում: Եւ եթէ մի փոքր ուշանում էր, սկսում էին հօրս մերկ ոտների տակ կրակ լցնել. այդ բաւական չէր. նրա մարմինը այրում էին տաքացրած շամփուրներով: Այդ սոսկալի տանջանքների ժամանակ ինչ որ իմ մօր դրութիւնն էր...ես անկարող եմ նկարագրել: Նա բոլորովին գժւում էր: Նա կտրում էր իր գլխի եւ պարանոցի զարդերից ամենաթանկագինը եւ տալիս էր ֆէրրաշներին... Զարհուրելի գիշերներ... Նա մենակ դուրս էր գալիս տնից, առնում էր իր հետ մի պղինձ կամ ուրիշ բան եւ տանում էր գինետուն, որ գրաւ դնէ եւ նրանց համար ըմպելիքներ բերէ: Նա մորթում էր մեր հաւերը եւ նրանց համար կերակուրներ էր պատրաստում... Բայց անողորմ հիւրերու ուտելուն եւ խմելուն չափ չկար:

... Մեր տունը նմանում էր մերկ գերեզմանի: Այդ կարո՞ղ էր հասկանալ ֆէրրաշը: Նա ինքն էր ծախել տալիս մեր կովը, մեր եզը, մեր գոմէշը... Հայրս վերջին ժամանակներում բոլորովին թողեց իր հողերի մշակութիւնը, որովհետեւ ստացած արդիւնքը մինչեւ անգամ չէր լրացնում հարկերի վճարը: Բայց այսպիսով նա դարձեալ չազատուեցաւ ֆէրրաշներից. նրանց այցելութիւնները դարձեալ շարունակւում էին»...

Զարհուրելի՞ն են արդեօք այս մոայլ պատկերները... Այո՛, ըսին կարդ մը ուշացած մարդարէներ, որոնք հայ ազատագրական շարժումները քննադատելով ու քարկոծելով, Երանի կուտային թուրքահայոց նախայեղափոխական օրերուն: Թերթեցէք սակայն Խրիմեանի «Արծուի Վասպուրականի»ն եւ կը տեսնէք, որ Վարագի արծիւները նկարագրած են նոյնօրինակ տեսարաններ՝ հարկահաններու բռնութիւններուն ենթակայ հայ գիւղական գեղջուկներու ամենօրեայ կեանքին... Հրատարակած են — Թուրքիոյ մէջ լոյս տեսնող հուշակաւոր հանդէսին մէջ...

Վայրկեան մը ընդունինք — թող ներեն ինձ արեւմտահայ եղբայրներս — ընդունինք, թէ Խրիմեանի հանդէսն ալ Բաֆֆիի «Կայծեր»ին պէս չափազանցուցեր է ֆէրրաշներու սարսափները եւ չափէն դուրս մոայլ գոյներով պատկերացուցեր հայ շինականի կացութիւնը: Դարձեալ, այնուհետեւ, կը մնայ այդ նկարագրութիւններու մէջ ճշմարտութեան ահաւոր բաժին մը: Ի՞նչ էին «գաւառական հաբրստահարութեանց» մասին գրուած հաստատոր տեսրները, որոնք Խրիմեանի Պատրիարքութեան օրով տեղատարափ կը թափուէին Կ. Պոլիս, լեցնելով Ղալաթիայի Ազգային Ժողովի արշիվները... Նոյն ամենօրեայ աղէտաւոր անցքերու պատմութիւններն էին:

Սակայն կոյր լաւատեսներ միշտ ու ամէն տեղ ալ եղած են երդուեալ հակայեղափոխականներու բանակին մէջ: 1878-ին, երբ Ազգային Ժողովին մէջ, վոսթորկայոյզ անցքերու տպաւորութեան տակ, կարգ մը ազատախոհ երեսփոխաններու լեզուները բացուեր էին եւ քիչ-շատ համարձակօրէն կը մատնանշէին թուրք-քրդական ռէժիմի չարիքները Հայաստանի մէջ, կը դանուէին մարդիկ նոյն ժողովին մէջ, որոնք, սարսափած այդ ազատական երեսփոխաններու յայտարարութիւններէն, ճառեր կ'արտասանէին չեշտելու համար հայ ժողովուրդի յարաբերական բարեկեցութիւնը հայկական վիլայէթներում: Այդ լաւատեսներու մէջ առաջնադոյնը «Կոնունկ»ի խմբագիր Մարկոս Ազարէկեանն էր: Ալ չեմ խօսիր օսմանեան վաղանցուկ պարլամենտի հայ երեսփոխաններու վարդագոյն ճառերու մասին, ուր թուրքահայոց վիճակը կը ներկայացուէր միանգամայն սիրուիչ պատկերով,— ճառեր, որոնց չարժանիթը թերեւս միմիայն աւանդական «փոլիթիքը» չէր:

Կասկածէ դուրս է, անշուշտ, Մարկոս Ազարէկեաններու հայրենասիրութիւնը եւ ես պատրաստ եմ նոյնիսկ ընդունելու, որ անոնց յայտարարութիւններն ալ — թուրքահայոց յարաբերական բարեկեցութեան մասին — միանգամայն կեղծ ու անհիմն չեն, այլ որ անոնք